ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ՄԱՆԹԱՇՅԱՆԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՌԱՍ ԱԼ-ԽԱՅՄԱ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Գևորգ Մանթաշյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Արաբական Միացյալ Էմիրություններ (Ռաս ալ-Խայմա), 2024թ. փետրվարի 23-ից 24-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «Ստարտափ Արմենիա» գիտակրթական հիմնադրամի միջև 2023թ. դեկտեմբերի 21-ին ստորագրված համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի շրջանակներում, համաձայն որի՝ կողմերը պայմանավորվել են համագործակցել բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի զարգացման, հայկական ստարտափ ընկերությունների առաջխաղացման, հարցերում, աջակցել հիմնադրամի կողմից կազմակերպվող տեղական և միջազգային միջոցառումների, այդ թվում՝ «Սիսայդ Ստարտափ Սամմիթի» անցկացմանը:

5. **Գործուղման նպատակը.**

   2024թ. փետրվարի 23-ից 28-ը Արաբական Միացյալ Էմիրություններում (Ռաս ալ-Խայմա) կայանալիք «Սիսայդ Ստարտափ Սամմիթ» ամենամյա գործարար համաժողովին մասնակցություն: Միջոցառումն անցկացվում է «Ստարտափ Արմենիա» գիտակրթական հիմնադրամի կողմից՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և ԱՄԷ գերագույն խորհրդի անդամ, Ռաս ալ – Խայմա էմիրության ղեկավար Նորին Մեծություն Շեյխ Սաուդ Բին Սաքր Ալ Քասիմի աջակցությամբ:

6. Քննարկված թեմաները.

Համաժողովին մասնակցել են տարբեր երկրների բարձրաստիճան պաշտոնյաներ, գործարարներ, ներդրողներ, ստարտափների ներկայացուցիչներ, վենչուրային ընկերություններ, փորձագետներ: Գևորգ Մանթաշյանը մի շարք քննարկումներ է ունեցել մասնակից ստարտափների հետ: Միջոցառման շրջանակներում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մանթաշյանը ԱՄԷ-ում ՀՀ դեսպան Կարեն Գրիգորյանի հետ միասին ԱՄԷ գերագույն խորհրդի անդամ, Ռաս ալ - Խայմա էմիրության ղեկավար Նորին Մեծություն Շեյխ Սաուդ Բին Սաքր Ալ Քասիմիին է հանձնել ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի հրավերը՝ Հայաստան այցի վերաբերյալ: Նորին Մեծություն Շեյխ Սաուդ Բին Սաքր Ալ Քասիմի հետ կայացած հանդիպման ընթացքում քննարկվել են հայ-էմիրաթական ոլորտային երկկողմ համագործակցության զարգացման, տեխնոլոգիական համագործակցության և Հայաստան այցի հեռանկարները:

Ներկայացուցչական այս միջոցառման հիմնական նպատակն է նոր միջազգային հարթակ ստեղծել հայկական ստարտափների, գործարարների, ներդրողների հանդիպման, փորձի փոխանակման համար, քննարկել փոխշահավետ համագործակցության հնարավորություններ այլ երկների ստարտափների, գործարարների, ներդրողների հետ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Համաժողովի բացմանը Գևորգ Մանթաշյանը հանդես է եկել ելույթով, ողջունել է միջոցառման մասնակիցներին, նշել, որ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, իր առաջնահերթություններում և ծրագրերում կարևորելով ստարտափ էկոհամակարգի զարգացումը, հետևողական աշխատանք է տանում ստարտափների կայացման և առաջընթացի ուղղությամբ, աջակցում, որպեսզի նրանք ներկայացված լինեն կարևոր հարթակներում, ցուցադրեն իրենց լուծումներն ու պրոդուկտները, առևտրայնացնեն դրանք, ձեռք բերեն գործընկերներ:

Իր ելույթում Գևորգ Մանթաշյանը նշել է, որ «Սիսայդ Ստարտափ Սամիթ ԱՄԷ 2024» այն կարևոր հարթակներից է, որի շրջանակներում անցկացվող բազմաբնույթ քննարկումներն ու կրթական ծրագրերը լուրջ հնարավորություն են ստեղծում մասնակիցների համար՝ բարելավելու իրենց գաղափարներն ու նախագծերը, մշակելու նորարարական լուծումներ, ներկայացնելու դրանք տարբեր երկրներից ժամանած ներդրողներին և ներդրումային կազմակերպություններին,

նոր գիտելիքներ ստանալ, գործարար հարաբերություններ հաստատել: Համաժողովի շրջանակներում Գևորգ Մանթաշյանը հանդիպել է Ռաս-ալ- Խայմայի ղեկավար գրասենյակի տնօրեն Համմադ Ալ Շամսիի հետ, քննարկել երկկողմ համագործակցության, համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ շարունակելու քննարկումները երկկողմ զարգացման հեռանկարների մշակման, ինչպես նաև համատեղ գործողությունների իրականացմանն ուղղված ծրագրերի վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

ԳԵՎՈՐԳ ՄԱՆԹԱՇՅԱՆ

28.02.2024թ.